

ՍԵՅՐԻ

Հայոց
87-444.1-175

ԳԵՐԻԿ

ԿԱ. 11

ԴԵՊԻ ԱՆՄԱՅՈՒԹԻՒՆ

(Պատկերազարդ պատմուածք մանուկների համար).

ԹԻՖԼԻՍ

Տպ. «Հերմէս» Մուխր. փ. № 13 | Տպ. „Гермесъ“ Мухр. № 13.
1911.

891.995
Ա-39

Հ Արմ.
Հ 3-2721a

3-2721a Տր-Կ61
2011-07-07

ՍԵՅՐԻ

ՊԿ

891.995

Ա-39

Գ Ե Բ Ի Կ ԿԱՄ

ԳԵՂԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

♦ Ուխտագնացութիւն ♦

(Արտադրական «Հասկել»-ից)

ԽԲ. № 22131

ԹԻՑԼԻՄ

Տպ. «Հերմէս» Մուլիք. փ.13 ॥ Տիպ. „Гермесъ“ Муҳр. № 13.
1911.

30 JUL 2013

12670

39751-63

891-935 շնոր
61-33 | դդրչ կամ
դդրչ սեհմանագործ

ՎԿ 4-0169 | 17/2 81

[Empty lines]



39751-67



1. ՈՒԽՏ

Հազիւ տաս-տասնըմէկ տարի է անցել այն օրից։
Ղաղ առաւօտ էր։ Երեսս բաց վազորդեան անուշ զովի ա-
ռաջ, ես քաղցը քնի մէջ էի կտրի վրա։ Սալմաստում
ամբողջ ամառ գիշերները կարի վրա են ընում։

Զընկ, զընկ, զընկ, մեղմիկ հասաւ ականջիս։
Զարթնելս, անկողնից վեր թոշելս ու կտուրից ցած—
փողոցում նայելս, մէկ եղաւ։ Զընկ, զընկ, զընկ, լըս-
ւում էր փողոցից, ձիաների տոփինի հետ միասին։

Ձիապանն էր՝ մի տասնեակի չափ ձիեր առաջն ա-
ռած, քշում էր։ Ա՛, այսօր ուխտի են զնում։ Մեր թաղի
ուխտաւորներն էին վարձել այդ ձիաները։ Ձիապանը
նրանց դռները մէկ-մէկ թակում ու կանչում էր, որ
պատրաստւեն։

Քշեց, անցաւ մեր տան առաջով։ Բայց դուռը չը
թակեց։ Մենք ուխտի չենք զնում։ Ու ես տիրեցի։

Ալեգակը զեռ չէր ծագել։ Նոր էի ցած իջել կտու-
րից, որ մեր գոնից շտապով ներս մտաւ իմ մօրաքոյը
Մարթան։ Նա զիմեց մօրս և խնդրեց, որ թոյլ տայ ինձ
էլ իրանց հետ ուխտի տանելու։

Աստած իմ, ինչպէս ուրախացայ ես։

Առանց սպասելու մօրս պատասխանին, վրա վազե-
ցի և թեերս տարածելով մօրաքրոջս ցածլիկ ուսերի
վրայից, պինդ-պինդ զրկեցի նրա պարանոցը։

— իմ լաւ, իմ սիրելի, իմ բարի մօրաքոյը. ինչքան
դու ուրախացըիր ինձ:

Մօրաքոյըս պատասխանեց ինձ մի տաք համբոյրով՝
թշիս վրայ:

Մայքս միթէ կարող էր մերժել:

Ուրախութիւնից խելքս թոցըի: Արագ-արագ մի
քանի անզամ համբուրեցի մօրաքոչս ու դուրս պըծայ
փողոց՝ հայ զէ:

Քամու պէս արագ, մի շնչով վագեցի մինչև մօրա-
քոչս տունը: Այնտեղ, զեղամիջի մեծ առւի ափին, ու-
ռիների տակ կանգնել էին ձիաները և խրոթ-խրոթ՝ ու-
տառմ էին առոյտի չոր խոտը: Նրանց շուրջը բոլորել էր
հետաքրքիր մանուկների մի մեծ բազմութիւն: Կանչը,
ծիծաղը, վէճն ու զրոյցը միախառնել էին իրար: Հա-
նելով այնտեղ, ամբողջ թափովս ինձ նետեցի նրանց
մէջ և գոշեցի.

— Հէյ, ես էլ եմ գալիս:

Օ՛հօ, այդ ով է, որ պակաս էր մնացել, — ասացին
նրանք:

— Ես եմ, ես, ինձ վերցնում է իր հետ իմ մօրա-
քոյը Մարթան:

Մօրաքոչս որնի Արշակն էլ այնտեղ էր: Թակով
միմեանց պարանոց զըկած, սկսեցինք ցատկոտել ու
երգել:

2. ՃԱՄՊԱՅ ԵՆՔ ԵԼՆՈՒՄ

Արեւլը նոր շառագունել էր:


Սալմաստի ծառագարդ հովտի վրա բացւում էր ա-
մառնային մի պայծառ առաւօտ:

Օգոստոսի վերջերին էր: Հովտի բոլոր բնակիչները
լցւել — լիացել էին պտղաւէտ ամառայ առատ բարիքով:
Կալուկուտը վերջացել էր: Աւարածինն (Աստածածնի
տօնը) էր, այն շաբաթը, երբ Սալմաստցու սիրտը
թունդ է ելնում, լցւում է մի անզուսալ սիրով՝ դիմելու

գէպի նւիրական Դերիկը և նրա լեռների կուսական ծո-
ցում ապրելու անվիշտ ու սիրառատ օրեր:

Եւ Սալմաստի թուրք ձիապանների մօտ էլ պարապ
ձի ու զրաստ չի մնում: Մի ամբողջ շաբաթ բեռնում
են ձիեր, և երկար, անվերջ բարւաններ զուլը-զուլ՝
նախշում են Դերիկ տանող ճանապարհը:

Մեր ձիերը՝ վեց հատ, բեռնած պատրաստ էին
զիւղից դուրս մեծ ճանապարհի մօտ, ստուերոտ արօ-
տում: Հոգատար մօրաքոյըս չէր մոռացել կախ տալ ձի-
երի կողքից մի քանի տոպրակ՝ լիբը մածունով:



Համբան-հայենի գիւղը

Շշուկ ու աղմուկ էր տիրում այնտեղ. բեռներն էին
ամբացնում, նստում էին ձիերը, տեղատորուում էին.
շուտ-շուտ այս ու այն կողմից լաւում էին ձայներ, ո-
րոնք շտապեցնում էին ճանապարհ ընկնել:

Մեզ հետ միասին, մի ընտանիքի պէս, ուխտ էին
զնում ծաղիկ Տատը՝ իր հարս Զէյրանի հետ և ամբողջ
գիւղին յայտնի ծերունի Մեսրոպը:

Մայրս եկել էր ինձ ճանապարհ դնելու:
— Մինչև կը վերադառնաս, գիշերները երազով հետը կը խօսեմ, ջերմ սիրով ասաց նա ինձ:

— Քեզ համար անմահական ջուր կը բերեմ, մայրիկ.
գիշերները գեղեցիկ ու հրաշալի երազներ տես:

Ծերունի Մեսրոպի համար ձիու վրա պատրաստել
էին մի փափուկ ու յարմար տեղ:

— Էսպէս հանգիստ տեղ իսկի շահն էլ չունի իր
թախտի վրա, — ասաց նա, երբ մեր օգնութեամբ նըս-
տել էր ձին:

Եշուկն ու աղմուկը շատացան. լսում էին զանգակ-
ների ընդհատ ձայները. Բոլորը պատրաստ էին:

Ես ու մօրաբոյրս նստեցինք մի ձի. Ծերով ամուր
խտտած մօրաբոյս մէջը, ես հըճում էի, դիտելով
մեր ուրախ քարւանը:

3. ԽՈՌՈՌՎԱ

Քարւանը շարժւեց:


Կամաց-կամաց առաջացանք ու մտանք պարսպա-
պատ այգիների նեղ փողոցները: Մի քանի անգամ ետ
նայեցի. մայրս կանգնած իր տեղում՝ ժպտում էր ինձ:
Նայեց այնքան, մինչև մենք շուռ եկանք ոլորապտոյա
փողոցը և ծածկեցինք նրա աշքերից:

Զընգ, զընգ՝ լսում էր համաշափ ու յամբ. Քար-
ւանը հանգարտ անցնում էր դեռ փողոցներով: Արեգա-
կըն արդէն բարձրացել էր: Երկու կողմից ճանապարհի
վրա կուցած ծառերը տարածել էին թանձը ու զով
ստւեր:

Այգիներով շրջապատւած ճանապարհը համնում էր
գիւղի սահմանը: Անցնելով սահմանի մեծ առուն, մը-
տանք Խոսրովա գիւղը, որ մի քանի տուն հայերի հետ
ամբողջովին բնակւած է ասորիներով:

Գիւղի միջով անցնելիս, կանայք, տղամարդիկ, օրի-
որդներ ու երեխաներ, բոլորը դուրս թափած տներից,

ժպտուն ու հետաքրքիր դէմքերով դիտում էին մեզ: Շա-
տերը նըանցից բարձրաձայն՝ յաջողութիւն և բարի



Սալմատեցի ասորիները արար են դարսում

ուխտ էին ցանկանում ուխտաւորներին:

Զարանձի մանուկները ծիծաղաշարժ ծամածու-
թիւններ էին անում ճանապարհի վրա: Խոկ մենք՝ ծի-
ծաղերես՝ ձիաների վրայից նըանց սպառնում էինք
բռունցքով:

Գիւղից դուրս եկանք, անցանք կալերի մօտով և
դարձեալ գնում էինք այգիներով շրջապատւած հովա-

սուն ճանապարհով: Ասորի ջահիլ կանայք աշխատում էին այգիներում: Նրանք՝ առողջ, բարձրահասակ ու գեղեցիկ՝ թեսերը կանթած մէջքերին, բարձրագլուխ ու հըպարտ գիտում էին մեզ:

Եւ այնքան ուրախալի, այնքան սիրելի էին այդ բուրը մեզ համար:

4. ԳԱՇՏՈՒՄ

Այգիների նեղիկ, ստւերոտ փողոցներից դուրս եկանք լայն ու արեսոտ դաշտը:

Մեր առջեռում ընկած էր փոշոտ, աւազածածկ հարթ ճանապարհը:

Ուխտաւորները, կարծես շլթայից ազատած, մէկէն քշեցին ձիերն ու տարածւեցին լայն ճանապարհի վրա: Հրճանքի անզուսպ աղաղակը, միախառնւելով ձիերի վրա կախւած զանգակների ահագին զըլնզոցին, թնդացընց օդը՝ ազատ լայնարձակ դաշտի մէջ: Փոշեղին ամպերի թանձը բուլաներ բարձրանում էին վեր, հըր-հըրում, փաթաթում էին իրար և արագ քշում, կորչում էին փոքրիկ քամու առաջ:

Իրար խոնած, ուրախ ու ցնծագին՝ արշաւում էր քարւանը:

Ամենքը հրճում էին:

Իմ սիրտն ուրախութիւնից այնպէս արագ-արագ բացուխուփ էր անում, որ կարծես ուզում էի թոշել և մի շնչով հասնել մինչև այն հեռաւոր, կապուտակ լեռները:

Նայում էի թեթև ու զարդարուն ձիեր նստած երիտասարգներին, որոնք՝ բարւանից առաջ ընկած, խաղացնում էին ձիերը, պտոյտներ էին գործում դաշտի մէջ և բաց թողնելով ձիանց սանձերը, մըրկի նման արշաւում էին բաց դաշտի մէջ, դէպի առաջ: Մենք տեսնում էինք նրանց ետևից բարձրացող փոշու սիւները և լսում էինք ձիանց

սմբակների հետզհետէ նւազօղ ուժգին տոփինները:

Սիրտս հալուսմ էր. ես նայում էի և այնպէս զերմ փափագում էի լինել երիտասարդ, նրանց պէս հագնել շողշողուն գէներեր, սանձել մի կատաղի նժոյդ, ճանկել նրա բաշը և դաշտերի վրա վազվող հողմին մըցութեան կանչել:

Բայց ահա երիտասարգներն արշաւեցին աւելի ա-



Սալմասեցիներ

աաջ և անյայտացան մեր աշքերից:

Ու ես իմ խեղճ ձիու վրան էի և ոտներս թափահարելով խեթում էի նրա կողերը. ձին հազիւ տընկտընկալով վազում էր, իսկ ես և մօրաբոյրս վեր-վեր թոշելով, ծիծաղում էինք:

Քարւանն արշաւում էր և թուրք ձիավարները՝ հետիոտն, ահագին լապչինները ըլուքընթացնելով գետնին, բզաւելով, զայրանալով, վազ էին տալիս այս ու այն

կողմ, քշելով բեռնաւորւած ձիերը և ետ մնացող ուխտաւորների էշերն ու ջորիները:

Մէկը միւսի ետեից ես նկատում էի իմ ընկերներին: ճշալով, քանի ձէնում ոյժ ունէր, սրարշաւ իմ մօտով անցաւ կոճօն՝ նստած իրենց կարճ ու կօլօտ էշը: Գուրջինց կարապետը, որի աւել անունն էր Գրումփա, այնպէս էր ծիծաղում, որ բերանը բացւել էր մինչև ականջները: Մկրտիչը, որին կանչում էին Կի-կի, նստել էր մի ձի, իր բոյր Սուսամբարի հետ միասին: Նա նետեց դէպի ինձ մի տանձ, որին ես իսկոյն որսացի: Ահա տանձի պոչ Օհանէսը՝ իր բարակ վզով: ահա 2արփաղար ձիլօն, Բէշուռը և Հալւալանը: ահա և կուարար ձիկօն:

Ուրախ ու գւարձալի էր քարւանը, իսկի չէին լռում երգը, զըոյցը, կանչն ու ծիծաղը: Փոքրահասակ տղաներն ու աղջիկները, վառ-վառ տօնական հագուստներով, ճշում էին ձիերի վրա և ձեռները վեր բարձրացնելով՝ ծափ էին զարկում: Զարմանալի շատախօս էին զարձել կիները: Շատերը ընթշութեամբ գրկել էին կրծքերի վրա փոքրիկ երեխաներ և գլուխները խոնարհած նրանց ժպտացող դէմքերի վրա, մանկական լեզով թոթովում էին անուշ ու սիրուն բառերը:

Պառաւներն ու ալեսորները ձիերի վրա կուճ եկած՝ շարունակ ետ էին մնում ու կանչում էին, որ առաջ շվագենը:

Մեր ճանապարհն ընթանում էր մերթ արեի տակ, բաց դաշտի միջով և մերթ երկու կողմից բարձրացած սաղարթախիտ ուռենիների տակով:

Ճանապարհի երկու կողմերում, հեռու, մինչև լիռները, զեղեցկօրէն ձգում էին ուռենիների երկար շարքերը և հարթ դաշտավայրը զանազան ուղղութեամբ խաղխղում էին մանր ու խոշոր առւակներ:

Շուտ-շուտ անցնում էինք բոստանների մօտով և ամեն անգամ մի քանի ընկերներ կանչ ու աղմուկով

վար էինք ցատկում ձիերից ու մտնում էինք բոստան: Այնտեղ իրար կողքի, խիտ առ խիտ աճած սեխն ու ձմերուկը կարծես դառ ու մաքիների մազաղած հօտեր լինէին:

Բոստանի ծայրում, զրի ափին՝ ուռենիների տակ շինած է բոստանշիների հօլիկը, որի մէջ նրանք պատըսպարում են անձրնից և որի կտուրից գիշերները հսկում են բոստանի վրա:

Այնտեղ՝ սիրաշահ ժպիտը դէմքին՝ մեզ ընդունում է թուրք բոստանշին, իսկ նրա տղաները վիշերով ու շւանիներով բերում են մեզ մօտ հասած սեխն ու ձմերուկները: Էլ ժամանակ չենք տալիս կշռելու, վճարում ենք և ամեն մէկս՝ գրկած մի կամ երկու սեխն, ձմերուկ, շընշապառ համնում ենք բարւանի ետևից:

Եւ ամեն անգամ մեր ձիապաններն ստանում են մեզանից իրանց բաժինը: Նրանք վարպետութեամբ ուտում են ձմերուկը՝ ճանապարհ զնալիս: Կտոր-կտոր չեն անում, այլ կճեպը կլոր կտրում են վրայից մինչև կէսը և այնպէս, ձեռքի մէջ բռնած, ուտելով գնում են և միևնույն ժամանակ բղաւում ձիերի վրա ու քշում են նրանց:

5. ՍԱՒՐԱ

Անցանք մի մեծ առու, որի վրա, ճանապարհի եղբին՝ ոտաւոր անցորդների համար՝ իբրև կամուրջ, զըցւած էին զերանի երկու ծուռ ու մուռ կտորներ:

Ուռենիների արանքից երկում էր այզիներով շըրջապատւած մի մեծ զիւղ: Սաւրան էր:

Զանգակների ձայնն աւելի ուժգնացաւ զիւղի փողցներում: Մենք անցնում էինք հայերի թաղով: Միւս կէսը բնակւած է թուրքերով:

Գեղեցիկն է Սաւրան Սալմաստի զիւղերից: Լայն ու մաքուր փողոցների վրա բարձրանում են կոկիկ ու սի-

քուն տները: Տները ներսից աւելի գեղեցիկ են, մանաւանդ գաւիթները՝ հարուստ ծաղկանոց-բանջարանոցներով, որոնք եզրաւորում են փարթամ ու բարձրահասակ աւելուկներով:

Իսկ ամենից գեղեցիկն ինքը— Սաւրացի հայն է, հոչակաւոր՝ իր սիրալիք հիւրասիրութեամբ և յայտնի՝ իր գեղեցիկ աղջիկներով:

Ահա նրանք՝ ժպտոտ, անկեղծ ուրախութեամբ բարեւում են: Հրաւիրում են իջնել ձիերից և իրենց մօտ փոքր ինչ զովանալ ու հանգստանալ:

Բայց անցնում ենք և զիւղից դուրս ենք գալիս, դարձեալ քարւանը խոնուում է իրար և դարձեալ արշաւանք լայն ճանապարհ վրա:

Անցանք ս. Վառ-Վառ սրբատեղիի մօտով, Հին-Քաղաքի կողքով և հեռաց տեսանք բլրի վրա ս. Յովհաննէսի մատուռը:

Ահա և յայտնի Սրբական Մինարէն: Դարերով կանգնած է նա ընդարձակ, բաց գաշտի միջին և կիզիչ արել, ձիւնը, անձրել, կարկուտն ու քամին մաշել են նրա նրբակերտ պատերը, և հեղեղը շրջանաձեւ փոքրել, փշացրել է պատերը հիմքից և ներս դնացել:

Թողինք Մինարէն էլ. անցանք էլի ահապին տարածութիւն տափարակ ու մշակւած հողերի և մտանք լեռների շարքը:

6. Դերիկը

Սկզբում փոքրիկ, փոքրիկ բլուրներ. նրանց յաջորդում էին աւելի մեծ երը, որոնցից սկսում էին լեռներ և ապա լեռնաշղթաներ:

Բարձրացանք և իջանք մի քանի սարեր. անցանք գեղանկար, կանտչազարդ ձորեր:

Բլուրներ, լեռներ, ձորեր՝ ուխտաւորների համար բոլորն էլ իրանց պատմութիւնն ունէին: Եւ խօսում էին անդադար. յիշում էին նախկին տարիների ուխտագնացութիւնը և պատմում էին զանազան արկածալի դէպքեր:

Տեսնում է՞ր այն երկու սրածայր բլուրները, որոնք կանգնած են միմեանց դէմ յանդիման.— ասաց մօրաքրոջս ամուսինը, ցոյց տալով մեզ բլուրները:— Ասում են Քեարամը՝ սիրոյ հրապոյը ով տարւած, լար է կապել նրանց գլխներից և վրան խաղացել է:

Օ՛հ, ինչպիսի հսկայական խաղ պէտք է լինէր: Նայեցի սրազագախթ բլուրներին, որոնք ահապին տարածութեան վրա՝ ցցւած էին իրար հանդէա: Նրանց մէջ մնում էր մի ձորի հարթ ու լայն բացը, և կարծես սիրահարւած՝ բլուրները միշտ նայում էին իրար վրա: Նայեցի ու երեակայեցի նրանց մէջ ձգւած լարը և լարի վրա խաղացող Քեարամին:

Ու յիշեցի մեր զիւղում շատ անգամ տեսած լարախաղցներին: Ինչըան չնշին թւացին ինձ նրանք...

Միջօրէի արեգակը շեշտակի այրում էր:

Ճանապարհի վրա ընկած գետափի կանաչկուտում փոքր ինչ հանգստանալուց յետոյ՝ ճանապարհը շարունակեցինք: Գնում էինք ու անզագար առաջ նայում: — ահա կերեայ Դերիկը: Օրւայ երեք քառորդն անցել էր. բարձրացել էինք մի բլուր:

— Դերիկը, Դերիկը, — սրտատրոփ կանչեց. ուխտաւորներից մէկը: Հեռւում նշմարւում էր տաճարի սպիտակ կաթողիկէն:

— Դերիկը, Դերիկը, — կըկնեցին մէկէն ուխտաւորները, և զլուխները մերկացան, շրթունքներն աղօթք մըմջացին ու ձեռները խաչակնքեցին բոլորը:

Օ՛հ, ինչպէս զիւթեց մեզ, բոլորիս լեռնալանջում բազմած այն փոքրիկ, կախարդական գմբէթը:

— Դէ, հէ, շնուր, — հրճւելով խեթեցինք ձիաների կողը: Զիանքը բայլերն շտապեցըին: Եւ քանի մօտենում էինք, այնքան աւելի ուժգին բարախում էին մեր սրտերը:

Ահա բոլորովին մօտիկ էինք Դերիկին: Ո՞վ Յիսուս.

ինչքան վրաններ էին խփւած: Ընդարձակ լեռնադաշտում կարծես մի մեծ վրանէ քաղաք էր բուսել: Ու ծուխը բարձրանում էր, ու երգը հնչում էր, կեանքն ուրախագին աղաղակում էր այստեղ:

Քշեցինք ձիաները ու մի յարմար տեղ ցած բերինք բեռները: Բոլորս զործի կպանք. մի քանի ըռպէում վրանն արդէն կանգուն էր և նրա կողքին ինքնաեւը դընդնում էր իր երգը:

Վրաններից հեռու, քիւրդ հովիւնները խմբել էին մատադացուի համար ոչխարի մի ահազին հօտ: Մօրաքրոջս ամուսինը զնեց երկու հատ մեծ զառներ և երկար չւանով կապեցինք նրանց վրանի մօտ խփւած ցցերից:

7. ՎԱՆՔԸ *)

Թիկունքին լայնանիստ, քարքարոտ սարեր, իսկ առջևում մի զեղեցիկ, զոգաւոր լեռնահովիտ. հարթ բլրի զլսին հստել է Դերիկը:

Շուրջպարի բռնած հսկայական լեռների ծոցում, քարաշէն պատերով, սպիտակ, սրածայր զմբէթով՝ փոքրիկ մենաստանը՝ կարծես աշերը դէպի վեր ուղած աղօթող մի կոյս լինի:

Անտաշ քարերից շինւած մի պարիսպ շըշապատում է Դերիկի մատուռը:


Երեկոյեան ժամերգութիւնը դեռ չէր վերջացել: Հազիւ լւացւած ու թափ տւած ճանապարհի փոշին, մենք շտապեցինք համբուրել ո. Աստւածածնի սեղանը:

Խայտալով ու ծիծաղելով բարձրացանք այն փոքրիկ դարիփերը, որ ընկած է վրաններից մինչև մատուռը: Մօրաքրոյս և միւսները դարպասից ներս մտան: Զէյրանը մի փոքր կանգ առաւ, մատներով բարձրացրեց նուրբ շղարշէ իւրփանգը դէմքից, ժպատակն ներս նայեց և

*) Դերիկի վանքը գտնւում է տաճկա-պարսկական սահմանի մօտ, պարսից հողի վրա:

ապա վլուխն զգուշութեամբ խոնարհելով, նոյնպէս մըտաւ: Ես ու Արշակն էլ Զէյրանի ետեկից:

Զարդարուն և ուրախ ժողովրդով լիքն էր ամբողջ գաւիթը: Ամեն կողմից փայլող ժպիտների միջից անցնելով, մօտեցանք եկեղեցու դռանը: Զահիլ հարսն ու աղջիկները՝ մի-մի ուխտ ու նպատակ սրտերում, եօթը գը-



Դերիկի վանքը

լուխ ման էին զալիս եկեղեցու շուրջը, որպէսզի Աստւածածինն իրենց ուխտը կատարի:

Ցածլիկ ու փոքր զոնով եկեղեցի: Եկեղեցին լիքն էր աղօթողներով: Պատկերների առաջ, զահերի, աշտանակների և պատերի վրա՝ ամենուրեք վառւում էին անհամար մոմեր և խնկի անուշահոտ ծուխը լցրել էր փոքրիկ անուշահոտ մատուռը:

Հոգեբռւլս երգերը հանդիսաւոր ծաւալում՝ էին մատութի մէջ և ժողովրդի սրտից իղձեր ու փափազներ ուղղում էին դէպի Բարձրեալը՝ սրտադին ու լի հաւատով:

Եւ խորունկ, վեհ ու սուրբ էր ժողովրդի այդ հաւատը:

8. ՎՐԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԸ

Ճարախ առաւտեան դարթնեցինք վագ:

Արել նոր էր ծագել, մենք արդէն նախաճաշում էինք: Ամեն բան այնտեղ տարօրինակ ախսրժելի էր ու համով: Եւ հացը, և թէյը, և մեր ուխտաւոր ընտանիքը, որ ուրախ բոլորել էր ինքնաեսի շուրջը:

Վրանի կիսախաւարում խիստ հաճելի զով էր և փոքրիկ քամին նրա գոյնզգոյն կտաւէ պատերը հանդարտ թափահարում էր ներս ու զուրս: Մի տեսակ զրաւիչ էր մեր վրանը. ևս ուրախանում էի նրանով և սիրում էի մէջը վրա պառկած նայել նրա զմբէթաւոր, ցածլիկ առաստաղին, որ հաստատւած էր վրանի ուղիղ մէջտեղում տնկած սիւնի ծայրին:

Նեղիկ էր մեր վրանը. զռանը մօտիկ, նապաստակի պէս զունչներս առաջ զցած, չոքել էինք ես ու Արշակը: Վրանի ձախակողմում նստել էր մօրաքոյրս՝ իր ամուսնու կողքին: Գւարթ խօսում, պատմում էին նրանք և մօրաքոչս ամուսինը շուտ-շուտ, առանձին բաղցրութեամբ կըկնում էր՝ «Ոսկի է Զէյրանը, ոսկի»:

Ու նստած ինքնաեսի մօտ, քնքոյշ ու շնորհալի՝ ոսկի Զէյրանը լցնում էր թէյի բաժակները: Իւրափանզի տակ թարթում էր սև ու խիտ արտեանունքը և նրա զրաւիչ ժպիտը մշտապէս խաղում էր աշքերի մէջ ու շըրթունքների վրա:

Շատ հպարտ և ուրախ էր Ծաղիկ Տատը իր հարսով: Եւ այդ ամեն անգամ երեան էր զալիս նրա աշքերի մէջ՝ երբ նայում էր Զէյրանին, կամ լսում էր նրա մասին:

ոըմէ ակնարկ, ձայնի ելաչների մէջ՝ երբ խօսում էր նրա հետ և մանաւանդ՝ երբ տալիս էր նրա անունը:


Ծալապատիկ նստած օթոցի վրայ և մէջքից մի փոքրը կռացած դէպի առաջ, ծաղիկ Տատը զցում էր մեղսիկի հատիկները և մէկ-մէկ մասնակցում էր խօսակցութեանը, կամ պատմում էր որմէ յիշողութիւն իր կեանքից: Վրանի մէջ նա առել ու մի կողմ էր դըել սպիտակ լաշակը և մնացել էր բաց-գլխով՝ մազերի վրա, ճակատի կէսից պինդ սեղմած մնտաքսէ սեազոյն թաշկինակով և ներքեա ծնօտը մինչև ստորին շըթունքն ամփոփող սպիտակ նաւարուվ:

Եւ շատ էր սազում նրա մօտ, վրանի խորքում, անկողինների ծալըին թիկն տւած ծանրախօս ծերունի Մեսրոպը, որին գիւղացիները կանչում էին Մըւրը: Նա գիւղի իմաստունն էր, որ կարող էր կարգալով և աղօթք-ներով կորեկի հատիկը սիւնն ի վեր բարձրացնել մինչև առաստաղը: Եւ իրաւ՝ նա գիտէր բոլոր զըրերը, բոլոր սրբերի և հայոց ամբողջ պատմութիւնը: Քանի, բանի անդամներ էին պատահել, որ նա մոռացած հաց, հանգիստ և բուն, օր ու գիշեր շարունակ կարգացել էր, և բանի անգամ կարգալու միջոցին յափշտակւել ու գնացել էր ապրելու երազների երջանիկ աշխարհում:

Նա սիրում էր փիլիսոփայութիւններ անել կեանքի ու աշխարհի մասին և զրած ունէր շատ ոտանաւորներ: Վերջին օրերում Հայոց-Հայրիկին էր ուղարկել՝ նրան ձօնած մի ոտանաւոր, որի ամեն մի տունն սկսող տառերը միասին կազմում էին Մեսրոպ:

Եւ մինչև հիմա էլ, երբ մայրս տեսնում է, որ շատ եմ կարգում, միշտ էլ կանչում է՝ «Տօ Մըւրը, հերիք է կարգաս»:

Հազիւ թէյի վերջին ումպը կուլ տւած, ևս ու Արշակը զուրս նետւեցինք վրանից: Մինչև կը զար մատաղ կտրելու ժամանակը, մանբղնացինք շըջելու վրանների մէջ:



Հազար տեսակ վրաններ կային. մեծ ու փոքր, գեղեցիկ և անշնորհ, հարուստ ու աղքատ: Հարուստներից էին այն մի քանի սպիտակ ու մեծ վրանները՝ զարդարւած ճառագայթաձև, կարմիր շիրազով եղբաւորւած ծոպերով, որոնք իսկոյն աչքի էին ընկնում իրանց գեղեցկութեամբ և բարձր գմբէթով:

Իսկ միւսներից մեծ մասը, ամեն մեկը կազմւած էր մի քանի գոյնի կատըներից: Շալ, ջէջիմ, կապերտ՝ սե, սպիտակ, կարմիր և այլ գոյներով՝ կարել էին իրար և վրան շինել:

Վրանների տեղը լեռնային սարահարթ էր և դէպի առաջ հետագիտէ բարձր գիրը էր ստանում: Մենք ըըրքալով ոստնում էինք դէպի վեր և արդէն ներքեի վըրանների գմբէթներին հաւասար բարձրութեան վրա էինք:

Եւ ինչ որ աւելի գրաւիշ էր վրանների քաղաքում, դա այն սէրն ու հարազատութիւնն էր, որ տիրում էր բոլոր ուխտաւորների մէջ անխտիր: Ամենքն ապրում էին մի ընտանիքի պէս, միենոյն կեանքով: Հարուստ ու աղքատ, կին և տղամարդ, տղայ ու աղջիկ հաւասար ընկերներ էին այնտեղ:

Վրաններից դուրս՝ այստեղ-այնտեղ շատերն զբաղւած էին մատաղ եփելու համար խարոյկներ փորելով, և շատ խարոյկներ էլ արգէս փորւած, պատրաստ էին:

Վրաններին մօտ մատաղցուները՝ ձգելով ոտներից կապած պարանը, մկրկում էին ու մայում: Փոքրիկ երեխանները դուրս էին եկել վրաններից, շատերն առանց վարտիկի, մի տակ շապկով, վազվում էին վրանների արանքում, կամ զրկած զառների զլուխները, շոյում, գուրգուրում էին, շուտ-շուտ համբուրելով նրանց լորձունոտ դունչը: Եւ այնպէս հրաշալի էր մանուկների ճլվըլոց՝ գառների մայիւնի հետ միասին՝ վաղ առաւտեան, լեռների վրա:

Մեր ընկերների հետ շրջեցինք ամբողջ վրանները,

խաղացինք, վազվեցինք ու կանչեցինք: Արեր բարձրացել էր. նկատում էինք՝ շատերը մատաղ կտրելու պատրաստութիւններ էին տեսնում: մեր ընկերներն էլ ցըրւեցին. իսկ ես ու Արշակը՝ վերեկց դարիվեր թռչելով, հեալով վազ տվինք դէպի մեր վրանը:

9. ՄԱՏԱՂԸ

Հասանք մեր վրանը ուղիղ այն ժամանակ, երբ մօրաքրոջս ամուսինը՝ բուռը լցրած՝ օրհնած աղով, մօտեցաւ գառանը:

Երբ գառը մորթում էին, Զէյրանը շուռ էր տւել դէմքը, որպէս զի շտեսնէ նրա տանջանքը:

Մինչդեռ մաշկում էին մատաղը, մօրաքրոյը մեծ կաթսան տեղաւորեց քուրայի վրա և երկու փոքրիկ ամաններ պարզելով ինձ ու Արշակին ասաց.

— Տեսնեմ՝ ինչքան շուռ կը գաք, հա:

Ու մինչդեռ մենք՝ առնելով ամանները, երեսներս շուռ էինք տւել դէպի ներքեսում հոսող գետը, մօրաքրոյը ամուսինը կանչեց մեր ետևից.

— Թռչունի նման թռէք:

Եւ թռչունի նման թռանք մինչև գետափը: Ամառնավերջի Դերիկի Զուրն էր՝ նւազած ու զուլալ, ինչպէս կանթեղ:

Եւ կժերը ձեռքին՝ թափւում էին ջուր տանելու մանկահասակ տղաներն ու աղջիկները: Աղջիկները դէրիանների փէշերը հաւաքել էին վեր և ոլորելով մի հաստ գօտի էին կազմել մէջքերի վրա:

Եւ երգում, աղաղակում ու աղմկում էին գետափում ուխտաւոր մանուկներ՝ գւարթ, անհանգիստ և ուրախ: Մենք հազիւ կարողացանք չը մոռանալ, որ պէտք է շուտ զառնանք ու վեր առնելով կժերը, թռանք դէպի խարոյկը: Զէյրանը երկու քայլ առաջ գալով, ընդունեց կժերը և նրանց նեղիկ բերաններից ջուրը կլկալէն լցրեց կաթսայի մէջ:

Մօրաքոյրս վառեց խարոյկը, և թանձը ծուխը պալան-պալան բարձրացաւ վերև:

Ու քանի տեղեր խարոյկ էր վառում, ու քանի ծխեղէն սիւներ ենում էին վեր ու ցրիւ գալիս:

Ու արեր պայծառ բարձրանում էր վեր, ու գեղեցիկ օրը ժպտում էր անդորր՝ Դերիկի լեռներում:

Վրանի կողքին փուած երկար սփոռցի շուրջը երկու կարգ իրար դէմուղէմ նստել էին մերոնք և մի քանի ուրիշ հրաւիրածներ:

Մատաղը ճաշակելու սեղանն էր այդ:

Մօրաքոյրս երկու ձեռք ունէր, երկուսն էլ ծախ էր առել: Գնդակի պէս թեթև ու արագաշարժ նա շտապշտապ անդադար գնում-գալիս էր, հարցնում էր, հոգում և կարգադրում էր:

Նրան օգնում էինք ես, Արշակը և Զէյրանը:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, մօրաքոյրս ու Զէյրանը մատաղը լցնում էին պնակների մէջ, իսկ ես ու Արշակը՝ դարսելով մատուցարանների վրա, բաժանում էինք հիւրերին:

Հիւրերի շարքում նստած էր և Դերիկի գիւղացիներից մէկը, որին կանչում էին Դերիկի Խաչօ: Նրանից ըիշ հեռու, զունչերը մեկնած թաթերի վրա, պառկել էին երկու հսկայ շներ՝ աշքերը տնկած կերակը ամաններին:

— Կը կծեն, — հարցրեց Արշակը, նայելով մէկ շներին, մէկ Դերիկի Խաչօին:

— Նրանք քրգին կը կծեն, հային չեն կծի:

— Իսկ ինչպէս կը ճանաշեն քրգին կամ հային:

— Իսկոյն, հոտիցն անգամ կը ճանաչեն:

Բայց մենք էլի վախվիսելով կերակուր լցրինք շների առաջ և հազիւ համարձակւեցինք ձեռքերով շփել նրանց գլուխները:

— Անուններ ունին:

— Սպիտակի անունն է Վաղկան, իսկ մոխրագոյնինը՝ Թոչկան:

Վաղկան, Թոչկան, կրկնում էինք մենք, աւելի մըտերմանսլով շներին, երբ մեղ կանչեցին:

Զոքեցինը սփոռցի ծայրին մօրաքոյրս ու Զէյրանն էլ իրանց տեղերը բռնեցին:

Մօրաքոյրս ամուսինը մօտ քաշեց տկնորը և բացանելով նրա վզին խեղդած թելը՝ կարմիր գինով լցրեց բաժակները:

Առաջին բաժակը բոլորը բարձր բռնած լսեցին ծերունի Մեսրոպի բարեմաղթութիւնների ճանապարհութեանի կաթուղիկոսից, էջմիածնի աթոռից, Հայաստանի եկեղեցուց, հայոց ազգից և ամենքին մաղթելով յաւիտենական հաստատութիւն, հասաւ մինչև Գեղրիկի վանահայր վարդապետը: Իր ճառը վերջացրեց հետեւալ խօսքերով.

«Իսկ մեր այս գեղեցիկ Դերիկը թող Աստած միշտ հաստատ պահի և մեր ժողովուրդը ամեն տարի այսօրւայ պէս զայ այստեղ, իր ուխտը նորոգէ, իր սէրն ամրացնէ, անխախտ պահէ հայոց երկը, հայոց ժողովրդի սուրբ հաւատը՝ դէպի գեղեցիկ ապագան, մինչև որ Աստած մի լոյս էլ կը բացի մեր խեղճ ազգի համար»:

— Ամէն, ամէն, բերանդ տաճար է, — գոչեցին ամեն կողմից և բաժակները շըմկըլսկացնելով՝ խմեցին:

Ու բաժակները մի բանի անգամ շրջան գործեցին, շատ կենացներ խմեցին, շատ բարեմաղթութիւններ արին:

Փոխէփոխ երգում էինք ես ու Արշակը և Դերիկի Խաչօն:

Զէյրանը, Ծաղիկ Տատը և մօրաքոյրս ժպիտներով խրախուսում էին մեղ:

Եւ ուրախ էին անցնում ժամերը այդ մատաղի սեղանին:

10. ԶԵՐՄՈՒԿՆԵՐԸ

Վանքի արևմտեան կողմում, մի բարձրադիր, հարթ տափարակի վրա գտնուում են Դերիկի հանքային տաք ջրերը:

Քարքարոտ ճանապարհը՝ տեղ-տեղ ժայռերի մէջ բացւած աստիճաններով՝ բարձրանում է տափարակի վրա։ Կայ նոյնպէս մի ոլորապտայտ նեղ շաւիդ, որ երկիւղալի է կողքին ընկած ժայռոտ, սուր կտրւած մի անդունդով։ Չիով բարձրանալու միակ ճանապարհն է դա։

Արեգակը թիշ թերւել էր արևմուտք։ Թղի մէջ կար զով բամու մի շոյիշ հոսանք, որ այնքան դուրեկան է լինում շոգ ժամանակ, մանաւանդ սար ու բարերի մէջ։ Զբերը տանող ճանապարհի վրա բարձրանում է անցուղարձի կենդանի աղմուկը։ Գնում են, գալիս են՝ մեծ մասամբ ոտքով, քշերը ձիու վրա նստած, իսկ ոմանք էլ գերադասել են Բարաղամի զգոյշ ու շրջանկատ օրհնեալ կենդանին։

Եւ ոչ մի տեղ ուրախութիւնն ու ծիծաղը չի բաժանում ուխտաւորի դէմքից։ Ահա այդ շոգ ճանապարհի վրա էլ ամենքը միմեանց ֆապտում, աշք ու ունք են խաղացնում։ Խօսում, կանչում են, պատմում ու լսում են՝ միշտ ուրախ, միշտ ծիծաղկոտ։

Մի բանի ժայռեր էին մնացել բարձրանալու տափարակը։ Մենք փոքրերս արդէն բանդել էինք մեր հագուստի կօճակները և վազ էինք տալիս։ Մի թիշ վերեւում, մի ժայռի ցից ծայլին, զարմանքով տեսայ իմ հօրեղբօր որդի Յակոբին։ Ինչպէս շգիտէի, որ նա էլ ուխտաւորների մէջն է. ինչպէս է, որ մինչև այժմ չէի հանդիպել նրան։ Ու երկուս էլ ուրախացած, չերմագին գրկախառնեցինք։ Ինչպէս լաւ էր։

— Դու արդէն լողանալուց վերադառնում ես, — ասացի։

— Այսօր երկրորդ անգամն է, երեք օր է՝ այստեղ ենք։ Դուք ե՞ք էր եկել։

— Երեկ։ Մեր տնից միայն ես եմ եկել մօրաբրոջս հետ։ Երեկոյեան կը տեսնենք ու կուշտ կը խօսենք։

— Հէ, — բղաւելով ցած վագեց Յակոբը։

Ես հըմւելով թռայ ժայռից ժայռ ու հասայ մերոնց

ետևից։ Ահա և տափարակի վրա ենք։ Գնացինք դէպի ջերմուկները. երկու խոշոր աւազանները լիքն էին լողացողներով և ուրախութեան ու հըմւանրի մի աննկարագրելի ճիշ ու աղաղակ էր բարձրանում լողացողների մէջ։

Կիները լողանում էին առանձին աւազանում և շատերը նրանցից գրկած ունէին երեխաներ, որ պահում էին ձեռների վրա, զլիներից վեր ու երբեմն թաղում էին ջրի մէջ ու զուրս հանում։

Մենք կանգնեցինք, սպասելով լողանալու մեր հերթին։

Ճերմուկներից թիշ հեռու, մի հարթ տեղում, արևի տակ, զահիները պար էին բռնել։ Պարն առաջնորդողի ձեռքում փըրփըրում էր կարմիր թաշկինակը, և կանաց, աղջիկների ու տղամարդկանց խառն շարքը գընում էր առաջ, բաց թողնելով զիլ ու ծորուն պարերգը։

Թոյ, թոյ, թոյ՝ շարունակում էր պարը, անդաղար նորոգւելով նոր նոր պարողներով։ Թոշում էին հա թըռչում և բամին խաղացնում էր տղամարդկանց մահութէ գլյումա-վերնազգեստները։

Ես գնացի լողանալու։

Մօրաքոյը թերթիցս բռնած, ինձ կախեց աւազանի մէջ և պատկրեց բռնել ժայռերից ու ափից չը հեռանալ. Աւազանը մեծ էր ու բոլորակ, ափերը բնական ու հաստատուն բարերից։ Մարդու ձեռքերը բնական աւազանին աւելացը էին միայն ներքեց մի անցք՝ ջուրը բաց թողնելու համար, որ գնում ու լեռնանում էր տափարակի ժայրում։ Եւ այնքան յորդ էր զլինում ջուրը աւազանի յատակից բազմաթիւ աղբիւըներով, որ կարճ միջոցում աւազանը լցում էր բոլորովին։

Եւ բռնած ափերի ժայռերից, ոտներս դէմ տւած աւազանի բարէ անհարթ պատերին, ես լողանում էի ցածը ու բարձր անելով։ Զուրն ինքը նետում էր վեր և սուլուկու համար հարկաւոր էր ճիգ զործ դնել. Իսկ ամեն

անգամ, երբ փորձում էի ափից բաժանւել և ազատ լողալ, իսկոյն թերում էի մի կողմի վրա, բերանս ջուր էր լցում, ևս վախեցած՝ ձեռներս չփշացնում էի ջրի վրա և ինձ բռնում էին ու կըկին մօտեցնում ափին:

Ուղիղ մարդու մի բարձր հասակով խորն էր աւագանը:

11. ԴՐԱՇՄԱՆԻ ԼԵՌԸ

Զերմուկներից քիշ հեռու—հիւսիս ընկնում է գեղեցիկ Դուշման-Դարանը (Թշնամու ձոր), որտեղից հոսում է նոյնանուն փոքրիկ գետակը: Իսկ գետի ափից բարձրանում է ժայռոտ ու վիթխարի Դուշման-Դաղը (Թշնամու լեռ), որի գագաթին նստած է նոյնանուն մի բերդ՝ կործանած ու աւել:

Այդ լեռն իր ձորերով ու ժայռերով յայտնի է որպէս ապստամբների ապաստարան և աւազակների բուն: Սըիւնն ու սպանութիւնը միշտ անպակաս են եղել այդ վայրերից և այդ պատճառով, յայտնի չէ որ ժամանակներից, այդտեղ ամեն ինչ ստացել է «Դուշմանի» անունը:

Զերմուկների մօտից, լերան գագաթին, հազիւ նըկատելի տեսնում էինք մարդիկ: Դժւար էր լինում որոշել նրանց շարժումները: Այդ բարձրութիւնից զլորւած մի բարը, իր հետ քշելով առաջն ընկնող բոլոր բարերը, ահազին դղըրդիւններով գահավիժում է ներքև և լերան ստորոտում ջարդ ու փշուր բարերի մի հեղեղ գարձած լցնում է Դուշմանի գետը:

Գեղեցիկ ու հպարտ է Դուշման-Դաղը, որին մենք ընկերներով նայում էինք երկար: Այդ չոր, բարոտ ու անդունդներով ծածկւած լեռը գրաւում էր մեզ:

— Օ՛խ, ինչպէս լաւ է այնտեղ գնալ, այն բարձր լերան գագաթին:

Ու դիմեցինք ձորի խորքը, որտեղից զգոյշ ու գաղտագողի հետևեցինք լեռը բարձրացող երիտասարդնե-

ըին: Ամեն ըոպէ երկիւղի մէջ էինք, թէ ահա մեզ, որպէս փոքրերի, ետ կը դարձնեն:

Մէջըց կռացած զէպի առաջ և տեղ-տեղ էլ փորսող տալով, հսկին բարձրանում էինք լեռը: Օդը ներշնչում արագ-արագ և ծիծաղն էլ աւելի յոգնեցնում ու թուլացնում էր մեզ: Ճնշակտուր՝ հազիւ կարողանում էինք կից-կտուր խօսքերով մեր տպաւորութիւնները հաղորդել:

Դանդաղ առաջ անցնելով, մի քանի ըոպէ բարձրանում էինք մանը բարակոյտերի վրայով, որ ամեն բայլափոխին ոտքի տակից ներքե էին սողում, զժւարացնելով վերելքը: Մազլցեցինք և միքանի ժայռեր, ու այնուհետեւ հեշտացաւ:

Չտապով հասանք գագաթը և մի խոր բաւականութեամբ շունչ առանք: Որպիսի՛ լայն աշխարհ բացւեց մեր առաջ: Նայում ենք արևելք՝ Պարսից հողի վրա՝ Սըլմաստի գեղեցիկ, կանաչազարդ հովիտն է, ուր հազարաւոր ջերը ոլոր-մոլոր ձգւած ժապաւէնի նման պսպղին էին տալիս արևի ճառագայթների տակ: Իսկ զէպի արևմուտք՝ Օսմանցոց հողի վրա՝ փուռում է Աղքակի լայնածաւալ ու անզարդ դաշտը: Գտնում ենք երկու պետութիւնների ուղիղ սահմանագլխին: Նայում ենք, նայում ու չենք կշտանում:

Այնքան գեղեցիկ էր երկում այնտեղից ամեն բան. կարծես դաշտերը, լեռներն ու ժայռերը, բոլորը յղկւած, հարթւած լինէին: Աղքակի մօտ հաւաքւած ժողովուրդը երկում էր մըջիւնների պէս:—Հէյ, գոռում էինք մենք ու թափ տալիս մեր ձեռքը. կարծես պիտի լսէին մեզ:

Ման եկանք լերան վրա ամեն տեղ: Ամեն մի փոսը, ամեն մի ճեղքը գրաւում, հետաքրքրում և զբացեցնում էր մեզ: Տեսնում էինք մի բար՝ զլորւած ու կանգ առած մի տեղում, կամ ժայռեր՝ ցցւած լերան մակերեւոյթից բարձր, և դրանք բոլորը թւում էին մեզ խորհրդաւոր: Թւում էր թէ այնտեղ եղել է մի շարժուն ու ե-

ոռւն կեանք, որ յանկարծ կանգ առել ու քարացել է շար վհուկի մի հարւածից: Եւ մենք սիրեցինք Դուշմանի այդ ըմբոստ ու խրօսա լեռը:

Երան գագաթի ամենաբարձր կէտում Դուշմանի կործանւած բերդի աւերակներն են: Ամրող են մնացել մի քանի քարաշէն խուցեր: Բերդի վրա երևում են հարւածների հնացած, մաշւած հետքեր: Ո՞վ զիտէ՝ մի ժամանակ ինչեր են կատարւել այնտեղ, ո՞վ զիտէ՝ մի ժամանակ ինչպիսի քաշեր են ապրել այդ ազատ լեռան վրա:

Երկար մնացինք այնտեղ. երկար դիտեցինք հրացանով նշան դնող երիտասարդների մըցութիւնը: Ինչպէս էին փայլում նրանց զէնքերն արեի տակ և ինչպէս էին սազում զէնքն ու զրահը այնաեղ, լեռան այն ազատ բարձրութեան վրա:

Ու երբ լիոնից իջել էինք աղբիւրների մօտ, շուտշուտ նայում էինք Դուշմանի բարձր գագաթներին ու սրտանց ափսոսում,—ինչու մի քիչ էլ շմացինք այնտեղ:

Քիչ առաջ ինչքան բարձրում էինք կանգնած, իսկ այժմ որքան ցածրացել ենք:

12. ԽՈՏԵՐԻ ԳՐԿՈՒՄ

Սրեկ կիզիշ թափը վազուց արդէն կոտրւել էր: Մենք ընկերներով, վրաններից հեռու, ծառերի տակն էինք: Ծառերը փոքրիկ էին ու հազիւ մի քանի հատ:

Այնտեղ, ըրդերի ու թուրքերի սարբած շուկայում, առատութեամբ թափւած սեխը, ձմերուկը, տեսակ-տեսակ խաղողներ, մըզեր, պտուղներ և ուրիշ բաներ շըջապատւած էին զնողներով: Ոգեւորւած թուրքերն ահազին կանչոցով գովում էին՝ մէկն իր ձմերուկը, միւսն իր խաղողը:

Մենք ընկերներով զատւեցինք այնտեղից, ու Դերիշի դաշտերը գնացինք ման զալու:

Ահա խրճիթներ՝ մէկ, երկու, երեք, չորս, հինգ, — բո-

լորը հինգ խրճիթ: Այդ էր վանքի գիւղը՝ նոր հիմնադրած և ազբատ բնակիչներով:

Նրանք մշակում էին Դերիշի հողերը և աճեցնում ու պահպանում էին նրա հօտերը: Բայց Դերիշի վանահայր վարդապետի ջանքերով շուտով գիւղը պիտի բերւէին նոր բնակիչներ, ծառեր ու այգիներ պիտի տնկւէին ջրերի ափին, ուսումնարան պիտի շինւէր և մի քանի տարւայ ընթացքում մի գեղեցիկ գիւղ պիտի լինէր այնտեղ:

Թողինք խրճիթները և անցնելով կիսատ մնացած մի քարաշէն հաստ պարսպի մօտով, առաջ վագեցինք մի լայն մարգագետնի վրա: Այդտեղ մեր սրտին տիրեց մի անզուսպ ցանկութիւն՝ վազելու, թռչկոտելու ու խաղալու: Եւ կօշիկներս պատահածին պէս դուրս նետելով ոտներից, խելազար պտոյտներով վազվոտեցինք փափուկ մարգագետնի վրա՝ կազմելով մի աննկարազերի ժխոր: Թափով պտըտում էինք դաշտի մէջ, և մեզ երեւում էր, որ շըջակայքի բոլոր արտերը, արօտներն ու լիոները նոյնպէս պտոյտ են գալիս այնքան արագութեամբ, որ նրանց վրայի խորդ ու բորդերը, զար ու փոսերը կուել ու սիրունացել էին:

Եւ շնչակտուր համնելով մարգագետնի կողքից հոսող առւակին, բարձրագոշ ծիծաղով թաւալեցինք նրա ափերին: Ու՞հ, ի՞նչպէս բարձր ու ցածը էր լինում մեր կուրծքը, ի՞նչպէս ուժգին էր խփում մեր բազուկը: Եւ հրաշալի էր այնտեղ—ըրի ափին: Կանաչ սէզն ու երեքնուկը այնքան առատութեամբ բուսել ու թանձրացել էին առւակի երկու կողմերից, որ նրանց արանքում հազիւ պսպղին էր տալիս լիոնային սրբնթաց անապական ջուրը: Անպատմելի բաւականութեամբ մենք ծուլանում էինք փափուկ խոտերի վրա՝ ականջ զնելով ջրի հնչուն, կախարդական ձայնին:

Անուշ ինքնամուացութեամբ տարւած, պառկի ու անկուշտ երազում էինք: Բոլորակ լիոները նման էին

հակայական պարիսպների, ողոնց վրա, իրքեւ առաստաղ, կոթնել էր երկնքի կամարը: Եւ ինչպէս աննիւթական մի ջահ, կամարից կախ, մեր դիմաց վառում ու լուսաւորում էր մայր մտնող արեգակը: Կարծես մենք դրանում էինք չնաշխարհիկ, աղամանդէ պալատում, ուր ամեն բան այնքան հրճւանք և այնքան խորհուրդ ունէր իր մէջ:

Յափշտակած, տարւած վերջալոյսի դիւժական պատկերով, մենք կարծես այլս առւակի ափին չէինք: Թռել, կանգնել էինք ահա այն ոսկէզոծ ժայռերի վրա և ցատկուում էինք մէկից միւսը՝ անհանդիստ ու ճախըռող թիթեռների նման:

Օ՛խ, ի՞նչպէս վսեմ էին այդ լեռները, ի՞նչպէս լաւ՝ այդ առուն, ի՞նչպէս գեղեցիկ էին այդ խոտերը՝ երեկոյեան այդ ժամին: Գգւեցինք նրանց, փայփայեցինք, համբուրեցինք ու տրտինդ տալով, մի գլուխ մինչև վրանները վագեցինք:

Երբ մենք կարմրատակած երեսներով, հե ի հե ներս ընկանք վրանը, մօրաբոյլու, Զէյրանը և միւսները՝ տեսնելով մեր փայլուն գէմքերը, ուրախութիւնից բոցբոցող աշքերը, յանկարծ վրա պըծան մեզ՝ ու տուր թէ կը տաս: Ծեծում էին մեզ, անխնայ ծեծում: Ու այդ ծեծի տակ մենք այնպէս էինք լիր ու բարձր ձայնով ծիծառում, կարծես ջրվէժ լինէր գահավիժելիս:

Եւ մեզ հետ ծիծառում էին ամենքը, ու միւսնոյն ժամանակ ծեծում: Ծեծում էին համբոյըներով, կըրծքերի վրա խանդագին ճնշումներով: Թեսերի մէջ առած, ինչպէս պարուրած երեխաների, մեզ տարուքերում ու ճօնում էին տարօրինակ, զմայլելի ձեսերով: Կարծես այդ ծիծառների, այդ շընաղ աշքերի միջից մի անմահական բոյը դուրս յորդելով, լցնում էր վրանը և կեանքն այդ ըոպէին այնքան քաղցը, այնքան հրճւանքով լի էր:

Ու խայտալով թուշկոտում էինք վրանի մէջ.

— Տատի ջան, տատի, էն սարի գլխին աղբիւր կայ:

— Հա, կայ, բաս, էն բարձր սարի գլխին աղբիւր կայ: Տատի ջան, տատի, ով նրա ջրից խմի, նա միշտ կապըի:

— Հա, բաս. ով նրա ջրից խմի, նա անմահ կը լինի:

— Տատի ջան, տատի, բաս Անմահական Աղբիւրն է նա:

— Բաս, բաս. Անմահական Աղբիւրն է նա: Աղբահայի իմաստուն թուչունն է բուն դրել այն Անմահական Աղբիւրի մօտ:

— Տատի ջան, տատի, Աղբահայի հրաշալի հէրիաթը մեզ պատմիր:

— Հէրիաթ՝ կը գնանք տուն՝ կը պատմեմ, էստեղ սազ չի գայ:

— Զէ, հիմա պատմիր, տատի ջան, հիմա պատմիր:

— Տղաների սիրտը մի կոտրի, ասաց Մըսըրը:

Ծաղիկ Տատը էն ձեռվ գլուխը թեքեց մի կողմի վրա, որ ասում էր՝ «լաւ»:

Մենք ուրախութիւնից ծափ տիխնք: Նստեցինք վըրանի առաջ՝ կապերտի վրա: Ծերունի Մեսըրոպն անդամ տեղաւորեց և հետաքրքրութեամբ դարձաւ Ծաղիկ Տատի կողմը: Մօրաբոյլու ամուսնու հետ կողը-կողըի նըստած՝ նոյնպէս ուղղեցին: Արշակը, յենւած ծաղիկ Տատի ծնկանը, աշքերը յառել էր նրա գէմքին: Զէյրանը նստել էր ու իր սովորութեան պէս ձեռները դրած գոզնոցի վրա և ծնօտը մի քիչ վեր բռնած, նայում էր: Ես թաւալել էի նրա կողըին և ծնօտս առած ափերիս մէջ, արմունկներով յենւել էի յատակին:

Ծաղիկ Տատը մէկ նայեց ներքե, մի ըոպէ այնպէս մնաց և ապա աշքերը մի տեսակ բացեց դէպի մեզ ու սկսեց:

13. ԱԶՐԱՀԱՅԻ ԻՄԱՍՏՈՒ ԹՈՇՈՒԻՆՔ

(Հէրիաթ)

« Հազար տարիներ առաջ կար մի երջանիկ աշխարհ՝ անունն Աղբահա:

Հազար տարիներ երկնքի օրհնութիւնն անսպառ

թափում էր այդ երկը վրայ, և մարդիկ այնտեղ ապ-
րում էին գոհ, ուրախ ու երջանիկ:

Գեղեցիկ երկիր էր Ազրահան:

Ամեն օր հրաշալի արշալոյսին, երբ ծագում էր ջերմ
ու պայծառ արեգակը, հիասքանչ երկնը տակ արևա-
գարդում էին հսկայական լեռներ, թաւուտ անտառներ,
մեծ-մեծ գետեր և անդնդախոր ձորեր:

Ազրահայի սիրուն աղջիկները լցնում էին հովիտնե-
րըն անվիշտ աղմուկով և թիկն տած ծաղկասփիւռ սարա-
լանցերին, զմայլւած ժպտում էին իրանց շքնաղ վաթանին:

Են լեռների վրա՝ մանուկ հովիւր յենւած իր ցու-
պին, նայում էր աշխոյժ արածող հօտին: Էն ժայռի տա-
կից աղբիւրն էր փախչում, ուրախ խայտալով, և ձորի
խորում, դաշտերի վրա ձգւում էին ջրերի պսպղուն
գօտիներ:

Գեղեցիկ, ծառազարդ դաշտերում շինականները հեր-
կում էին հողը և զցում էին նրա բարերեր կրծքի մէջ
յոյսի հատիկներ: երկինքը թափում էր յորդ անձրևներ,
լեռները բաշխում էին առատ ջուր, և յոյսի հատիկները
բունում, աճում և ոսկէ հասկերով ծփում էին դաշտի
վրա՝ մեղմաշունչ, անուշ հովի առաջ:

Ամառայ կիզիչ արևի տակ փայլում էր մանգաղը, և
խոնջացած զւարթաղէմ հնձւորները հանգստանում էին
հաճոյրով զով ուսենու տակ և խմում էին աղրարակի
վճիտ, անմահական ջրից:

Աստղերն ելնելուն, մանգաղներն ուսին, գիւղն էին
դիմում, և ճանապարհին ցնծում էր ուրախ շինական եր-
գը, և կտուրներից ձայն էին տալիս նոցա երգերին:

Կտուրի վրա, անուշ լուսնի տակ փուլում էր սեղան
և հնձւորները ուտում էին կուշտ և խմում էին Ազրահա-
յի կարմիր այն նեկտար գինուց:

Եւ խոր քնի մէջ, մինչե բարի լոյս, զով հովն էր
խաղում նրանց երեսին, և թովիչ երազն յափշտակում
էր նրանց ջինջ հողին:

Եւ երբ գալիս էր Ազրահայի փոքրիկ, սիրուն ձմեռը,
շինականները լիբը ամբարով՝ բոլորում էին օջախի շուր-
ջը և պառաւ տատը պատմում հրաշալի հէքիաթ և սով-
քեցնում էր փոքրիկ թոռներին իրանց վաթանի—սիրուն
Ազրահայի և քաջ պատերի դիւթական երգը:

Եւ երգում էին գիւղական անշուր, մաքուր յարկի
տակ՝ երգն Ազրահայի իմաստուն թոչնի և զովքը իրանց
քաջ թագաւորի:

Ազրահայի երկիրն ունէր մի իմաստուն և ծեր թըռ-
չուն: Ազրաներն ամենքը գիտէին, որ այդ թոչունը մա-
ցել է իրենց շատ հին պապերից, բայց ոչոք չգիտէր,
թէ որ օրւանից կամ որ տարւանից նա բաղդն էր դար-
ձել Ազրահայի երկրին:

Ամեն առաւօտ, լոյսը բացւելուն, թոչում էր Ազրա-
հայի իմաստուն թոչունը, հպարտ սաւառնում էր շքնաղ
Ազրահայի վրա, և վաղորդեան ջինջ օդի մէջ նայում էին
նրան բոլոր Ազրաները և աղաղակում էին. «Ով իմաս-
տութեան մայր, քո թերերից բարիք է մաղում մեր ա-
զատ երկրի վրա»:

Եւ իջնում էր իմաստուն թոչունը, մտնում էր շինա-
կանի խըճիթը. փոքրիկ մանկիկը շոյում էր նրա ոսկե-
փայլ մէջը, կատուն մոռալով հեղիկ շփում էր նրա կող-
քի փափուկ մազերը և հաւերը կըկրալէն պար էին
բոնում նրա առաջին:

Սիրում էր նա նստել արօրի մաճին, սիրում էր նա-
յել խորունկ ականջ դնել հերկւորի երգին:

Ու սիրում էին նրան աղրաները, ու ծաղկում էր
Ազրահան նրա իմաստութեամբ:

Ամեն տարի, երբ ձիւնը հալում էր դաշտերից, երբ
հողի տակից լոյս աշխարհ էին նայում կանաչ կոկոններ,
մի նշանակած օր Ազրահայի ամբողջ ժողովուրդը դուրս
էր գալիս հրապարակներում, կտուրներում ու փողոց-
ներում:

Ու թոչում էր Ազրահայի իմաստուն թոչունը:

Թոշում, ճախրում էր օդի մէջ և նստում էր ամենաքաջ ու ամենաիմաստուն մարդու գլխին։ Ու այն մարդուն՝ լինէր նա շինական թէ ազնւական, լինէր գիւղացի թէ քաղաքացի, կին թէ տղամարդ, Ազրահայի ամբողջ բնակիչները սիրով պսակում էին թագաւոր։

Եւ երկրի ամեն կողմերից, ամենի նժոյներ հեծած, թոշում էին թագաւորի մօտ Ազրահայի ամենաքաջ և ամենաընտիր երիտասարդները։

Եւ այդպէս միշտ ամենաքաջ և ամենաիմաստուն մարդն էր լինում երկրի թագաւոր, և երկիրը պահպանում ու շէնացնում էին Ազրահայի ամենաընտիր երիտասարդները։

Եւ ծաղկում էր Ազրահան տարէց-տարի, օրէց-օր։

Հքնաղ պալատներ, ամպամերձ աշտարակներ և վիթխարի ամբոցները գարդարում էին երկիրը ամեն տեղ՝ լեռների վրա, զաշտերի ու հովիտների մէջ։ Ամբողջ երկիրը ցանցի պէս ծածկում էին մարուր ճանապարհներ և զետերի ու ձորերի վրա հաստատում էին ամրակուռ ու խրոխտ կամուրջներ։

Եւ Ազրահայի բնակիչները յաւերժական երգերում փառաբանում էին իրանց ազատ հայրենիքը և օրհնում էին իրանց իմաստուն թոշնին։

Երբ օտարները դրսից կամենում էին ուժով ներս մտնել և աւերել Ազրահան, այն ժամանակ աշխատասէր խաղաղ Ազրաները՝ կին և տղամարդ, միաբան հոգով, երկրի ամեն ծայրերում, անխորտակելի պատնէշի նման դէմ էին դնում։

Եւ խաղաղ, ապահով ծաղկում, գարդարում էր Ազրահան, և զոհ ու երջանիկ ապրում էին Ազրաներն հաշպար տարիներ։

Բայց եղաւ մի թագաւոր, որ չուզեց տեղ տալ նորընտիր թագաւորին, վոնդեց նրան, ժողովրդի վրա ծանր հարկեր նշանակեց և ճնշեց նրա ազատութիւնը։

Վեր սաւառնեց Ազրահայի իմաստուն թոշունը, վըշ-

տուտ աչքերը չորս-բոլոր ման ածեց և մի մարդ չը տեսաւ, որ կամենար թագաւորի բոնութեան դէմ կանգնել։

Վշտահար թոշունը սուր ճիշ արձակեց, ուժեղ թերը լայն թափահարեց ու թուաւ հեռացաւ Ազրահայից։

Տիւրութեան մի թանձր քօլ ծածկեց Ազրաների դէմքը, չքացաւ ձորերի և զաշտերի ուրախ աղմուկը և մարդիկ վլուխները դռնից հանած՝ կասկածով էին նայում դուրսը։

Թշնամութիւնը բուն դրեց նրանց մէջ, և եղբայրը թափեց եղբօր արիւնը։

Երկիրը դադարեց շէնանալուց, ժողովուրդը բոնութեան տակ կորցրեց քաջութիւնը և մի օր օտարները ոտի ելան ու արշաւեցին Ազրահայի վրա։ Անսլարտաւան թագաւորը գորքեր հաւաքեց և հրաման տւեց կուելու։ Բայց թշնամին յաղթեց, սպանեց թագաւորին և կործանեց նրա գահը։ Արիւնով ու կրակով տիրեց ամբողջ ժողովրդին և ծանր քարի պէս չորեց նրա կրծքին։

Եւ արիւնն ու արցունը թափւում էին ժողովրդի աշքերից։

Սյդպէս գժբախտացաւ Ազրահան։

Մնցան տարիներ, և մի օր ինչ որ կամացուկ շշուկ էր լսում ճնշւած ստրուկների մէջ։

Մի հողագործ արտը վարելիս զտել էր մի հին քար, որի վրա փորագրւած էր, թէ Ազրահայի իմաստուն թըռչունը բերւած է եղել Անմահական Ազրիւրի մօտից։

— Անմահական Ազրիւրի մօտն է իմաստուն թոշնի բունը, — փսփսում էր ժողովուրդը։ — Այնտեղից պէտք է նըրան բերենք, որ գտնենք վերստին մեր հին փառքն ու երջանկութիւնը։

Դուրս եկան մի քանի սրտոտ երիտասարդներ, չը վախեցան բոնութիւնից, հազան երկաթէ տրեխներ, վերցրին պողպատէ զաւագաններ և ընկան երկրէ երկիր՝ իմաստուն թոշնին զտնելու համար։

Մնցան զաշտեր, ձորեր, լեռներ, և ամեն տեղ՝ զաշ-

տերի հողմերին, լեռների արծիւներին, կռունկների շարաններին հարցնում էին. «Եարաբ չէք տեսել Ազրահայի իմաստուն թռչունին, եարաբ չը գիտէք՝ որտեղ է բղխում Անմահական Աղբիւրը»: Հարցնում ու գնում են անդադար: Եւ մաշւում է նրանց գաւազանի ծայրը, և բարականում է նրանց տրեխների տակը:

Անցան տարիներ, նոր սերունդներ եկան, հետզհետէ շատացան խիզախ երիտասարդները, հետզհետէ յոյսն էլ շատացաւ ժողովրդի մէջ:

Եւ մինչև այսօր էլ անհամար երիտասարդներ՝ հագած երկաթէ տրեխներ, բռնած պողպատէ գաւազաններ, անդադար թափառում են աշխարհէ-աշխարհ, երկրէ-երկիր և հարցնում են ծովերի վրայից եկող բամիներին, լեռների կատարին նստած արծիւներին, հեռւից չւող կռունկների շարերին. «2ը տեսաք եարաբ Ազրահայի իմաստուն թռչունին, եարաբ չը գիտէք՝ որտեղ է բըդխում Անմահական Աղբիւրը»:

Հարցնում են ու անցնում անդադրում:

Եւ շատ է մաշւել նրանց գաւազանը, և մօտ են ծակւելու նրանց տրեխները:

Երանի ով պիտի գտնի Անմահական Աղբիւրը, ով պիտի բերի Ազրահայի իմաստուն թռչունը»:

14. ՀՐԱՇԱԼԻ ԶԱՆԳԻՒԼՈՒՄ

Տատիկն իր հերիաթը վերջացրեց:

Հասաւ զով ու անուշ երեկոն:

Վրաններում հետզհետէ վառւեցին մոմերը:

Նստել էինը վրանի առաջ փուած կապերտին ու լութեամբ ապրում էինը լեռնային խաղաղ երեկոյի բնրոյշ ու խոհուն հաճոյը:

Հատ-հատ խօսրեր, կարծես մոլորւած, երբեմն դուրս էին ընկնում ու խկոյն կորչում:

Մեր զլխի վրա անհամար աշքերով թարթում էր դիշեքային երկնը հազար խորհրդով, հազար երգերով

ապրող կամարը: Այնտեղ էլ երկինը նոյնն էր, ինչպէս մեր գիւղում: Ամենքին իրանց տեղում՝ տեսնում էի այն բոլոր աստղերը, որոնց ես ճանաչում էի: Ահա ուղիղ մեր դիմաց—արևելքում հորիզոնից նոր բարձրանում է և այն պայծառ, շողշողուն աստղը, որին գիւղում սիրում էինք նայել ամեն երեկոյ: Ամենից մեծ, ամենից մօտիկ աստղն էր նա:

Եւ լուռ, կարծես խորհում էին ամբողջ վրանները: Այստեղ, այնտեղ երեման լսում էին երգող մանկական զիլ ձայներ ու կրկին լուռմ:

Ու մինչզեռ մենք պառկոտած վրանի առաջ, նայում էինք աստղոտ երկնը կամ ականջ էինք դնում լսող երգերին, հնչուն ու բարձր՝ լսեց բոլոր ուխտաւորներին ծանօթ ձայնը:

— Սկսեց:

— Սուս, լսենք՝ ինչ է երգում:

Խաղաղ օդի մէջ ձայնը հնչում էր բարձր, գնում էր հեռուն և թւում էր թէ երգում էին ուղիղ մեզ մօտիկ: Ուղրւած, գլուխներս բարձր բռնած, մենք լսում էինք երգը, իսկ օդի զով հոսանքը հասցնում էր մեր ականջին նրա ամեն մի խօսքը:

Սիրտս կանթեղ կը վառեմ,

Եկած ճամբիդ լոյս կանեմ.

Սիրուդ համար, այ աղջիկը,

Դուշման մարդուս լաւ կանեմ:

Յաջորդեց մեղմ ու բնըյշ մի կանացի ձայն:

— էղ էլ Գիւլին է.

— Սուս, տղայ և աղջիկ հարց-պատասխան են երգում:

Աղջիկը երգում էր.

Սիրուդ ճամբին լոյս կանես,

Դուշման մարդուդ լաւ կանես.

Բայց թէ յանկարծ ինձ կորցնես,

Լոյս աշխարհում ինչ կանես:

Տղան— Դերվիշ կընկնեմ դոնէ-դուռ,
Դարդս կերգեմ ամեն դուռ.
Ողջ աշխարհը ման կըգամ,
Քեզ կը փնտռեմ դոնէ-դուռ.

Աղջիկը— Թէ մի ամրոց ինձ տանեն,
Պարսպի մէջ բանտարկեն,
Կտրիճ տղայ, ոնց կանես,
Թէ դարպասը պինդ փակեն:

Տղան— Կառնեմ կրակ երկնային,
Կը տամ սագիս սիմերին,
Էնպէս վառած երգ կասեմ,
Պարիսպ-դարպաս կը հալւեն:

Աղջիկը— Ծովի բիւրեղ պալատին
Թէ թագուհի ինձ տանեն,
Ել դու ինձ ոնց կը տեսնես
Անծէր ծովի յատակին:

Տղան— Ծովերն ամեն ման կը գամ,
Մոմուռ կը լամ, ման կը գամ.
Զրերը խոր յուզելով,
Քեզ սուզ ձէնով ձէն կը տամ:

—Ի՞նչ բաղցը բան է ջահէլութիւնը, —ասեց ծերունի Մեսրոպը, երբ լսել էր գեղեցիկ զուգերզը. —աշխարհում ամեն սիրուն բան ջահէլութիւնն է ստեղծում. Էտ երզը սիրուն ու թովիչ է ին աստղերի պէս, անվախճան է անմահութեան պէս. Ջահէլութիւնն է ստեղծել նրան:

15. ԴէՊԻ ԱՆՄԱՀՅԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Մեր վրանի դուռը նայում էր ուղիղ արևելք: Դիմացը տարածւած էին Դերիկի լեռները՝ միմեանց բամակ բարձրացած իրանց կոնածե գագաթներով:

Նստած ենք վրանում և սպասում ենք արևի ծագման:

Մեր մտքում գալիս են պատկերներ երեկւայ հրաշալի հերիաթից և յափշտակւած այդ պատկերներով, խորին հիացմամբ նայում ենք լեռների վրա:

Այնտեղ մի նօսը կարմրութիւն հետզհետէ բարձրանում, վուռում է երկնքի երեսին:

Մօտ էր արևի ծագումը:

Յանկարծ արագութեամբ գունաւորւեց արևելքը և վայրկենաբար նախ զէպի վեր և ապա ուղիղ՝ դուրս վազեցին հըեղէն ճառազայթները և նրանց ետևից արևի վերին մասը: Մի ըոպէ լեռների վրա ցոլցլացին ծիածանի բոլոր գոյները, ապա արագութեամբ անհետացան, և լեռան վրա երևաց արեգակի ամբողջ գունդը: Հըճւանքով նայում էինք հըեղէն գնդին, և մեզ երգում էր, որ լոյսի մի ժապաէն արագ-արագ, ետաղարձ շըշաններով պտտում է նրա շուրջը:

—Նայեցէր, տղայք, —ձայն տեց ծերունի, Մեսրոպը, —ահա այն բարձր լեռների վրա, ուղիղ այնտեղ, որտեղից արևն է ծագում, գտնում է Անմահական Աղբիւրը: Ովկ գնայ այնտեղ, նրա ջրից խմի, անմահ կը դառնայ:

—Եթէ գնանք այնտեղ, կը գտնենք Անմահական Աղբիւրը, կազմատի Ազրահան:

—Այո:

—Բայց ովկ կարող է գնալ այնտեղ: Երեկի ոչ ոք, բացի թոշուններից:

—Ո՛չ, մարդն էլ կարող է գնալ: Երբ ես ձեզ նման մանուկ էի, բարձրացայ այն լեռան ամենաբարձր գագաթին, աշքերս վառած, կատաղաբար վազ տեցի, որ գտնեմ ու գետինն էլ հետը պոկ տամ ու ցած բերեմ Անմահական Աղբիւրը: Բայց յանկարծ ամպերը կուտակւեցին, մթնեց սարի վրա և այնպէս շըրիսկաց ամպը, որ ես կանգնեցի ու վախեցած վերև նայեցի: Ահեղ ձայնով

գոռզոռացին ամպերը, կայծակը շանթեց և փայլակները
հրհելով ինձ ցած զլորեցին լերան գաղաթից։ Երեխ
ժամանակը չէր… Բայց եթէ կարող էր, դուք գնացէք.
ով գիտէ, զուցէ ամպերը չեն գայ հաւաքւի, սարի գըլ-
խին չի մթնի, փայլակները ձեզ չեն զլորի ցած և զուք
կը գտնէք Անմահական Աղբիւրը։

Մինոյն ըոպէին ես ու Արշակը լոռութեամբ իրար
նայեցինք։ Կարծես մի միտք էինք ուզում վճռել։ Նայե-
ցինք և անխօս հասկացանք միմեանց միտքը։

— Կարող ենք գնալ, — ասացինք միաբերան։

— Այ, քաջ տղաներ էր երևում։ միշտ այդպէս եղէք.
ես սիրում եմ քաջութիւնն ու համարձակութիւնը։ Գնացէք,
միայն ձեզ ասեմ, չը պէտք է վհատէք, երբ կը տեսնէք,
որ Անմահական Աղբիւրի սարը հեռանում է ձեզանից։
Բայց իսկապէս շուտ չէր հասնի։ Մի լերան կը յաջորդի
մի ուրիշը, նրան մի ուրիշը, էլի մէկը, դարձեալ մէկը և
այդպէս շարունակ, մինչեւ որ կը հասնէք ամենաբարձր
գաղաթին, որտեղ է Անմահական Աղբիւրը։

— Մենք գնում ենք, — զոշեցինք ու ոտքի էինք։

— Նախշուն իգիթներ, կը գնաք, Անմահական Աղ-
բիւրը կը գտնէք, — տեղից վեր թուաւ ու մեզ փոխէ փոխ
դրկելով ու համբուրելով՝ զոշեց մօրաբոյր։

— Ձէք փախենայ, որ գնաք բարձր սարի զլիխին, —
կամացուկ հարցըրեց Զէյրանը։

— Ինչու ենք փախենում, — խրոխտացինք մենք և
վրանից դուքս թուշելով չու զցեցինք ամբողջ վրանները
և իսկոյն խմբելով մեր ընկերներին, թուանք դէպի լեռները։
Լեռներ անսահման՝ միշտ վեր, դէպի վեր։

Ու ընկերների մեր բանակը՝ խիզախ ու վազքոտ՝
դիմում է վեր, դէպի վեր՝ քրտնաթոր ու հերոս։

Մի գաղաթ, երկու գաղաթ։ Այդքան արդէն բար-
ձրացել ենք։ Երբորդը կանգնած է վերեւում և հրապու-
թիշ կախարդի նման մեզ է կանչում։ Դէհ։

Միշտ վեր, դէպի վեր՝ քրտնաթոր ու հերոս։

Եւ քանի բարձրանում ենք, կախարդն այնքան պա-
կասեցնում է իր հրապուրը։ Սրդէն երրորդի գաղաթին ենք։

Վերև չորրորդն է՝ կարծես ոտից զլուխ մի մուգ ու
հարթ շապիկ հազած։ Գեղեցիկ է նա և հրապուրիշ, ինչ-
պէս մի կախարդ։

Դէ, դէպի վեր՝ խիզախ ու վազքոտ։

Բայց այս ինչ ձայն է։

Սարի լանջին արօր կայ լծւած։ մի զոյգ եզը բա-
շում են, իսկ մաճկալը երգում է։

— Գնանք նրա մօտ և հարցնենք Անմահական Աղ-
բիւրի մասին, — դեռ շատ կայ հասնենք։

— Հասօն է, Հասօն, — ուրախ բացականչեցինք խըմ-
բովին, երբ մօտեցանք արօրին ու տեսանք հրացանը լու-
ծի վրա կասլած։ Դերիկի արօրն էր։

— Բարի աշողում։ Հասօ եղբայր։

— Այ զուք բարով, փորբիկ մանուկներ. ինչ էր ա-
նում այստեղ։

— Անմահական Աղբիւրն ենք գնում, Հասօ եղբայր,
դեռ շատ կայ հասնենք։

— Անմահական Աղբիւր. սարն ի վեր միշտ բար-
ձրացէք, մինչեւ որ հասնէք։

— Դէհ, մաս բարով, Հասօ եղբայր։

— Գնացէք բարով, կտրին մանուկներ։

Կախարդը կանչում է միշտ վեր, դէպի վեր, քրտն-
աթոր ու հերոս։

Կախարդը ցնդեց, ուր կորաւ յանկարծ։

Ահա նա, բարձր. նոր է հասել ու նստել։ Հաւաքում
է լայն զգեստի վեշերը և ծածկում է կախարդական
մարմինը։

Ինչքան հրապուրիշ է։

Դէհ. դէպի վեր ու միշտ վեր։ Բայց՝

— Այս ինչ ձայն է։

— Ի՞նչ անուշ ձայն է։

— Կախարդն է երգում։

Ցից ժայռի հովում նստած է հովիւր, անուշ ու աշ-
խոյժ սրինք է սուլում: Մշմշալով արածում էնախշուն-հօտը:

—Գնանք նրա մօտ և հարցնենք Անմահական Աղ-
բիւրի մասին,—դեռ շատ կայ հասնենք:

—Բարի աջողում, հովիւ եղբայր:

—Դուք հազար բարի, անուշ մանուկներ, հէր էք
մոլորւել:

—Հովիւ եղբայր, մենք չենք մոլորւել, գնում ենք
Անմահական Աղբիւրը,—դեռ շատ կայ հասնենք:

—Անմահական Աղբիւրը. էլի բարձրացէք վերև. թէ
որ հասնէք մի ձորի, որի միջից մինչև միւս լեռը ձգւած
լինի ձորի յատակից բարձրացող մի հողէ կամուրջ, ան-
ցէք վրայից և գնացէք այնքան, մինչև որ հասնէք: Իսկ
եթէ ձորը լինի անկամուրջ, խոր ու մուժ, ապա ետ
դարձէք, գնալն անկարելի կը լինի:

—Մնաս բարով, բարի հովիւ:

—Գնացէք բարով, խիզախ մանուկներ, խրատս լաւ
միտ պահեցէք:

Դերիկի հօտն ու հովիւն էին. լեռների վրա գառնե-
րըն արածում ու հովիւր թիկն էր տալիս ազատ, ապահով:

—Այ, էն գագաթին կը հասնենք կախարդին:

—Տեսէք՝ ինչպէս, ինչպէս է կանչում:

—Նա մեզ է ուզում:

—Այնտեղ է նրա ապարանքը:

—Եւ Անմահական Աղբիւրը:

Միշտ վեր, գէպի վեր, քրտնաթոր ու հերոտ:

Կախարդն այս անգամ շատ բարձր է նստել:
Դէ-հա-դէ, դէ-հա-դէ. վեր, վեր, գէպի վեր. ահա գագաթը:

Տիսուր ու մոայլ է գագաթը: Զը կայ կախարդը, չը
կայ ապարանքը: Մե՛, զարհուրելի վիշապի պէս պառ-
կած է ձորը: Խորն է ու մութը, յատակը չէ երևում,
կամուրջ էլ չը կայ:

Էն կողմը դաժան լեռներ, էլ կախարդ չը կայ, հը-
պոյը չը կայ:

—Ահա ձորը, կամուրջ չկայ վրան, պէտք է դառնանք:
—Այո, ետ դառնանք, պատմենք հովին, որ տեսանք
ձորը՝ խորն էր ու մութը և վրան էլ կամուրջ չը կար:
—Հապա Անմահական Աղբիւրը:

—Զը գնանք, չը գտնենք Անմահական Աղբիւրը:
—Նայեցէք, տղայր, այս ինչ նշաններ են հողի վրա:
—Ոտքի հետքեր են, երեխ հէնց նոր այստեղից
գայլ է անցել:

—Կը գայ, մեզ կուտի. դառնանք, ետ դառնանք:

Դէ՞հ շուտ, շուտով ետ դառնանք:

—Ի՞նչ դժւար է Անմահական Աղբիւր գտնելը:

—Եկող տարի կը գանք պինդ գոտի կապած, թե-
թև տըեխներ հազած, կը վագեննը մի թափ մինչև ձորի
խորը, կը բարձրանանք այն լերան ծայրը և կը գտնենք
Անմահական Աղբիւրը:

—Այո, այո, եկող տարի, եկող տարի:

—Եկող տարի, եկող տարի, —որոտաց լեռների վրա
ու թը՛փ, թը՛փ, թը՛փ բլուրն ի վար գահավիժում են
կտրիճները:

Կախարդը ցնդեց, Անմահական Աղբիւրը ցնդեց...

Թը՛փ, թը՛փ, թը՛փ, բլուրն ի վար գահավիժում են
կտրիճները...

16. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ

Կիրակի օրւայ պատարագը հանդիսաւոր էր:

Ինձ այնպէս էր թւում, որ Դերիկի փորըիկ անզար-
դարանք մատուռում երգերն աւելի վեհ, աւելի տպաւորիչ
էին, քան մեր զիւղի մեծ և փառաւոր եկեղեցում:

Գեղեցիկ ու տպաւորիչ էր և այն վարդապետը, որ
կանգնած ամբիոնի վրա խօսում էր ժողովրդի հետ:

Ասում էր՝ «Հայ ժողովուրդ, դու սիրում ես քո տու-
նը, պաշտում ես քո սըրերը: Լեռների այս ամայութեան
մէջ դու հերոսութեամբ պաշտպանում ես հազար տարի-
ների սըրավայրը:»

Ասում էր՝ մի ինչ որ անհասկանալի ուժ կայ ըռ
մէջ, որ միշտ առաջ է մղում քեզ. այդ ուժը ըռ պահա-
պան հրեշտակն է. նա քեզ հազար տարիներ պահել,
պահպանել է, հազար արիւն-գետերից է անց կացրել, հա-
զար սուր ու թրից է փրկել:



Թագրատ վ. Թաւաւմալեան]

Ասում էր՝ զու մի արմատ ունիս, որի վրա աճած
ճիւղերը բանի կտրատում են, այնքան էլ նա նոր-նոր շի-
ւմը է արձակում, որոնք մեծանում ու հովաշատ ճիւղեր
են զառնում:

Ասում էր՝ ըռ աստղը երբէք չի մարի, ըռ արմատը
երբէք չի չորանայ: Միրիր ըռ վաթանը, սիրիր ըռ աշ-
խատանը և միշտ, ամեն տարի նորոգիր ուխտդ ըռ
պապերին...»

Եւ վարդապետի ձայնը զանգակի պէս դօղանջում էր,
ամբողջ մատուռը լցնում:

— էտպէս վարդապետ դեռ չէր տեսել Սալմաստը,—

նստած վրանների արաջ՝ խօսում էին ուխտաւորները՝ ե-
րեկոյեան պլազմացող աստղերի տակ.—առարեալի պէս էր
խօսում. ասում էր՝ սիրիր ըռ աշխատանը, ըռ պապերի
արիւնն ու բըտինը, և հաւատա, որ զու կը գտնես ըռ
անմահութիւնը:

17. ՀՐԱՅԱՆԻ ՊԱՅԹԻՒՆԸ

Ճեռաւոր լեռների բամակից շրեղ հանդիսով բար-
ձրացաւ լիալուսնի ահազին, վառվուն գունդը: Երկնը մուգ-կապոյտ գոյնը աղօտ լուսաւորւեց. աստղերը գու-
նատւեցին և լեռները ձգեցին հսկայական ստերներ:

Հորիզոնի վրա լուսինը մի պահ կարծես անշարժ
կանգնել էր և թւում էր թէ նրա լուսաւոր սկաւառակից
բարձրանում էր մի լուսեղին թափանցիկ մշուշ:

Բայց դա մի գեղեցիկ վայրկեան էր:

Լուսինը կարծես թէ պոկ եկաւ իր անշարժ կէտից
և արագութեամբ լողաց երկնը կամարն ի վեր: Լեռների
շուրջ ետ-ետ քաշւեց և հարթ տարածութեան վրա հե-
տղնետէ երեան եկան քարեր, բոյսերի ցից-ցից մնա-
ցած ցողուններ, յետոյ քիշ-քիշ գետավը և ապա գետը:
Զուրը փայլեց: Նրա մէջ ցոլացին լոյսի զողզողուն ու
բեկրեկւող ցոլքեր:

Պատկերը փոխւեց:

Լուսաւորւած զէմքերի վրա մկանները շարժւեցին և
այնպէս դասաւորւեցին, որ ժպիտ ձեացաւ: Մարդկէ
զւարթացան: Դուկ, զուկ՝ լսւեցին կամաց, հետղնետէ
շատացան, աստիճանաբար բարձրացան և կազմւեց ազմուկ:

Շարժում, շշուկ, շշնջիւն ու ձայն միախանւեցին
իրար: Մկանեց ուխտաւորների զիշերային անուշ կեանը:

Մի տեսակ մեղմ ուրախութեամբ, մի տեսակ ընթուշ
յոյզով էր լցում այնտեղ զիշերների կեանը: Ահա վրան-
ներից զուրս թափւեցին ամենը: Մի բանի տեղեր խմբում-
ներ կազմեցին. այստեղ-այնտեղ լսում են երգի ու շվիի
ձայներ: Թմբուկի ու զուռնայի ձայնը լցնում է արձականը-

Ներով Դերիկի ձորերը, և պարը բոլորում է այնտեղ, և
երգն ու ծիծաղը ցնծում են այնտեղ:

Պարում են ընքոյշ ու նազելի ճօճումներով: Տղամար-
դիկ, կանայք, աղջիկներ ու տղաներ խառը՝ ձեռք-ձեռքի
բռնած, մերթ ձգում են, ձեացնելով մի երկար ու գեղե-
ցիկ շղթայ, մերթ շըջան են բոլորում, կազմելով մի սի-
րուն ու շարժուն օդակ:

Եւ չեն դադարում երգն ու պարը, մինչև խոր գիշեր:

Բայց ես ծերունի Մեսրոպի կողըին նստած՝ լսում
էի նրա պատմութիւնները:

Դիշերից բաւական անցել էր: Դեռ ևս լսում էին
թմբուկի ձայնը և պարողների ուրախ ու հնչուն երգը:

— Այստեղ, Դերիկում կրակ վառեցին Մաֆֆիի
կայծերը, —ոգեորւած խօսում էր ծերունի Մեսրոպը, —
այստեղ էր որսորդ Աւոի տունը, այստեղ էր Մարօն և
այստեղ էր, որ հրացանը կապած արօրի լծան վրա,
հերկ էր անում Հասօն: Այստեղ էին որսորդ Աւոի աշա-
կերտները՝ Ասլանը, Կարօն՝ *) իրանց ընկերներով:

— Նայեցէր, ահա Դերիկի զինուրը. դրանք Ասլանի
ու Կարօնի ընկերներն են:

Քիչ հեռուում լուսաւորւեց մէկի բարձր հասակը, որ
հանդարտ ու համաշափ քայլերով առաջանում էր մեր կողմը: Նրանից առաջ վազում էին երկու հսկայ շներ. մենք իս-
կոյն ճանաչեցինք նրանց. Վազկանն ու Թուշկանն էին:

— Բարի երեկոյ, — ասեց նա՝ հրացանը ուսին:

— Զինուր եղբայր, մի քանի ըովէով մեղ մօտ արի,
— կանչեց նրան ծերունի Մեսրոպը:

Նա մօտեցաւ, չոքեց կապերտի ծայրին և հրացանը
դրեց ծնկների վրա: Վազկանն ու Թուշկանը բարեկամա-
բար մօտեցան մեղ և նստելով գետնին, լեզուները կախ
արած՝ սկսեցին նայել ուղիղ մեր աշքերին:

— Ամեն զիշեր մինչև լոյս, մեր ընկերներով շըջում ենք

վրանների շուրջը: Այս տեղերի վրա վստահել բոլորովին
չի կարելի, —խօսում էր զինուորը:

— Ինչու հրացանիդ դոնդաղը կոտրած է, — նկատեց
մօրաբրոց ամուսինը:

Զինուորը հրացանը տւեց նրան նայելու:

— Դրա կոթը կոտրւեց մի կուի մէջ, որ մենք ունե-
ցանք բրդերի հետ: Բայց դա լաւ հրացան է և նոյնիսկ
կոտրւած կոթով շատ լաւ է խփում նպատակին: Մէկ
էլ՝ զիտէք թէ զինուորը ինչըան է սիրում իր հրացանը.
Ժողնելայս հրացանը և մի ուրիշը վերցնել՝ չեմ կարողանում:

Մինչդեռ մենք խօսում էինք, յանկարծ մօտիկ լեռ-
ների վրա շըջսկաց մի հրացան: Չայնը հնչեց շատ
ուժզին և շըջշըջսկալով զնաց հեռացաւ լեռների խոր-
քում ու լոեց:

Մի վայրկեան սսկեց ամեն ինչ:

Ծները ոստնեցին հեռու և ցցեցին ականջները: Զին-
ուորը խլեց հրացանը, կանգնեց ոտքի, մի վայրկեան նա-
յեց և շներն առաջից՝ սլացաւ դէպի այն կողմը, որտե-
ղից լսեց հրացանի ձայնը:

Վրաններն իրար անցան. բոլոր զինուորները մի ա-
կնթարթում թռան դէպի լեռները:

Մենք սպասում էինք՝ ահա կը պատահի մի բան:
Անցան ըսպէններ, կէս ժամ, ոչինչ չկար, երեւի պատահ-
մամբ զինուորներից մէկի հրացանն էր արձակւել:

Այնպէս դիւթիչ էր հրացանի շըջշըջկոցը լեռների
մէջ: Ես անձկութեամբ սպասում էի՝ ահա կը լսի եր-
կրորդ պայթիւնը, նրան կը հետեւն երրորդը, չորրորդը,
և շըջշըջսկոցների ցնծազին հարսանիքով կը լցնեն ձորե-
րը, և նրանց կարձագանքեն հանդիպակաց լեռների խոր
անդունդները:

Եւ այգպէս թռոնդ կը հանէին նրանք իմ սիրու
ների ծոցում:

Բայց էլ չը լսեց հրացանի պայթիւն:

*) Մաֆֆիի «Կայծեր» վէպի հերոսները:

18. ԵՏ, ԴԵՊԻ ՏՈՒՆ

Մնաս բարեաւ, Դերիկ:

Չիաները բարձւած, պատրաստ էին:

Վերջին կենսաթրթիռ ըոպէներն էինք շնչում Դերիկի լեռներում:

Ահա կը սպառւեն այդ ըոպէներն էլ, և մենք կը թողնենք այն չքնաղ հովիտները, ուր անցկացրինք այնքան թանկ ժամեր, ուր ապրեցինք այնքան ուրախ օրեր:

— Սուրբ Աստածածին, զու բարեխօս լինես: Այս սիրուն աշխարհը, այս հայոց աշխարհը միշտ շին ու պայծառ պահես: Քո դռնից միշտ անպակաս արա բարեպաշտ ուխտաւորի ոտքը: Թող վերջինը չը լինի այս տարին, որ ըստ դուռն ենք եկել: Սուրբ Աստածածին, զու միշտ վառ պահիր ճրագը էս ամայի սարերի, ձորերի մէջ:

Վերջին աղօթքն էր մրմնջում զգացւած ժողովուրդը, երեսը դարձրած Աստածածնի մատուռին, որ այնպէս համեստ, այնպէս շնորհաշուր բազմել էր սարի փէշին:

Քիչ առաջ այնտեղ վերջին ժամերգութիւնն էր կատարում: Ժողովուրդը վերջին անգամ աղօթում, մխիթարուում էր և հայր-սուրբը իր վերջին օրհնութիւնը տևց նրան:

— Սուրբ Աստածածին, զու օդնես,—ասացին ու ամենը նստեցին ձիերը:

Երեք մայր էր մտել, երբ հասանք մեր զիւղը:

Զա՞նգ, զա՞նգ, զա՞նգ, ուխտաւորների աղաղակի հետ միասին լսւեցին զիւղի մէջ: Տներից զուրս թափւեցին ամենը, — որն ընդունելու իր ուխտաւորին, որն էլ նրանց հետ ուրախանալու և ծիծաղելու:

Մայրս շը սպասեց, մինչեւ ես կիջնէի ձիուց:

— Եկար, զու իմ քաջ ուխտաւոր, — կոչեց նա և խլելով ինձ ձիու վրայից՝ խտտեց զըկի մէջ կարօտած ու չերմ գգլաներով:

— Մարթա, քոյրա, թող Աստած վարձատըէ բեզ քոյ լայն ու սիրաշատ սրտիդ համար: Ինչպէս զու մեզ ուրա-

Խացրիր, թող այնպէս էլ Աստած բեզ ուրախացնի:

Մայլս այդպէս յայտնեց մօրաքրոջս իր շնորհակալութիւնը:

Մենք ուրախ-ուրախ դիմեցինք տուն և փոքրիկ եղբայրներս զիմաւորեցին ինձ շքնաղ գէմքերով ու այնպէս հիանալի, այնպէս սիրելի գունդ ի գունդ հարցերով:

Տաս-տասերկու տարի առաջ էր այդ:

Հազիւ անցել էր այդ օրերից մի, թէ երկու տարի. մի օր բերեցին ու մեր զիւղի եկեղեցում պահեցին Դերիկի մատուռի զգեստները, պատկերները, աշտանակները և ուրիշ անօթները: Մի ուրիշ օր էլ բերեցին ուրիշ բաներ, որոնց մէջ էին Դերիկի կաշւէ ահագին խնոցին և մի սնդուկ, որի առջեի կողմից կային երկու ծակեր՝ ծածկած խոշորացոյց ապակիներով: Երբ նայում էինք այդ ապակիներին և պտտում էինք աջ կողմից զրւած կոթը, մեր աշըի առջեից անցնում էին զանազան պատկերներ՝ այնքան խոշոր, կարծես կենդանի:

Դրանք զարսուած էին եկեղեցու ամբարում և յիշում եմ ես, երբ մեր եկեղեցու զաւթում, զասարանից զուրս էինք զալիս զասամիջոց, իսկոյն վազում էինք այդ ամբարը և սկսում նայել սնդուկի պատկերները կամ թափահարել զատարկ խնոցին:

Ի՞նչ էր պատահել, ինչու մեր զիւղն էին բերում Դերիկի հարստութիւնը:

Հայաստանի մէջ, հեռու սարերի վրա, ինչ որ բաներ էին կատարել: Քրդերը սուր վերցրած՝ հասել էին մինչև Դերիկ և սպանում էին յարձակել ու ամեն ինչ աւերել: Ալդ պատճառով տեղափոխում էր Դերիկի ունեցած հարստութիւնը:

Բայց հազիւ էր անցել մի քանի շաբաթ, մի օր եկեղեցու զաւթում տհանք Դերիկի Խաչօին՝ Պաղկանի ու Թոշկանի հետ:

— Ի՞նչու էր եկել:

—Քրդերը յարձակւեցին. կոիւ եղաւ. ով սպանւեց,
ով վիրաւորւեց և մացածներս այստեղ փախանք: Նայե-
ցէր, Վազկանն էլ վիրաւորւած է:

Ֆնդակը ծակել էր նրա ազդը և նիհարած Վազկա-
նը՝ պառկած գետնի վրա՝ անդադար լիզում էր վէրքը:

Յաշորդ օրը միայն տեսայ մօրաբրոջս տանը պառ-
կած՝ մի անծանօթ մարդ: Նա Դերիկի զինւորներից էր՝
վէրք ստացած վերջին կուի մէջ և այժմ վիրաւոր պառ-
կած, տնքում էր՝ ծանր ու սրտամաշ: Մօրաբրոյրս չորած
նրա անկողնի կողքին՝ խնամք էր տանում:

Դերիկը կործանւեց: Բայց ուր էին նրա քաջերը, ին-
չու նրանք չը պաշտպանեցին նրան:

Մեծ հրդեհ էր բռնկել Հայոց աշխարհում, վառում
էր հրդեհը և հանգցնող չը կար: Գնացին Դերիկի քաջե-
րը, գնացին այն հրդեհի մէջ, ու էլ չը վերադաշան:

Գնաց և Դերիկի անձնէը հայր սուրբը:

Դերիկը մնաց անտէր...

Եւ եկան ըրգերը, ծածկեցին այն գեղածիծաղ լեռ-
ները, լցըին այն ծիծաղախիտ ձորերը, կողոպտեցին ու
այրեցին փորսիկ մատուռը, և աւերն ու արիւնը թագա-
ւորեցին Դերիկի վրա. և լռեցին անուշ երգերն ու սուրբ
տաղերը այն գեղածիծաղ լեռներում, և այն ծիծաղախիտ
ձորերում...

Եւ այն լեռների ամայութեան, այն անվառունակ
տիրութեան մէջ, մի մորմորող, կանչող ձայնով բարձրա-
նում է Դերիկի անկուռ ողբը, որ կանչում է իր հա-
րազատներին.

«Երնէկ ով պիտի գտնի Անմահական Աղբիւրը, ով պիտի
բերի Աղբահայի իմաստուն թռչունին, ով պիտի սրբի ա-
րիւնն ու արցունքը իմ ժողովրդի աշքերից»:



12670

H AD
3-2

971
971

